ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27.05.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՌԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության պետ Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՌԱ իրային, ՎՔՆ, կոչտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության հրատարակչական բաժնի պետի տեղակալ Ա. Մուրադյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի և «Փեն բոքս» ՍՊԸ-ի, որոնց կողմից ներկայացված և ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը հաստատված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ, «Փեն բոքս» ՍՊԸ-ի կողմից 13-րդ չափաբաժնի մասով Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք», անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառերը: Ուստի 29.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակիցներին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, և 31.05.2019թ. նիստը շարունակվել է:
Քանի որ 10.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:
1.2 31.05.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի, «Փեն բոքս» ՍՊԸ-ի, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի, «Լիմուշ» ՍՊԸ-ի, «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի, «Կանցլենդ» ՍՊԸ-ի, «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ի, «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն-ի, «ՏԵԽՆԻԿԱ ՊԼՅՈՒՍ» ՓԲԸ-ի և «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:
1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող	Հ. Մելիքյան
Գնահատող	Լ. Խաչատրյան
Գնահատող	Գ. Ռատյան
Գնահատող	Ա. Մուրադյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան